25/95

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

Գ. ԳԵՅԼԵՐ

ՄՈՊՐ-Ը ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

78

ՄՈՊՐ-ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՄԻ ՀՐԱՏ. № 9.

ՅԵՐԵՎԱՆ - 1927

(12+17) 1/3 Գրքեր բոլոր տեսակների մասին
2017
363.2
363

Գ. ԳԵՅԼԵՐ

ՄՈՊՐ-Ը ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄՈՊՐ-Ի ՀՇՑԱՍՏԵՂԻ ԿԵՆՏՈՆԻ ՀՐԱՏ. № 9.

ՅԵՐԵՎԱՆ—1927

ՀԱՅՊԵՏՊՈՒԼԻԳՐԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1389
ԳՐԱՌ. 912 Բ. ՏԻՐԱԺ 8000

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ
1-2427գր.

ՄՈՊՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Խորհրդային Միության մեջ լայն կերպով տարածվել են Մոպրի կազմակերպություններն ու բջիջները: Այժմ, գուցե չգտնվի մի քիչ-շատ գիտակից բանվոր կամ գյուղացի, վոր լսած չլինի Մոպրի մասին, չգիտենա, թե ինչ է նրա նպատակը: Մեր Միության գիտակից բանվորներն ու գյուղացիները շատ լավ յուրացրել են հեղափոխության մարտիկներին—կապիտալի բանտարկյալներին ոգնելու ամբողջ նշանակությունը, և իրենց ուժերի ու հնարավորությունների չափով աջակցում են Մոպրի ամրապընդմանն ու աճմանը:

Տեսնենք, թե Մոպրը իր աշխատանքի յերեք տարվա ընթացքում Խորհրդային Միության մեջ ինչպես է աշխատել և ինչ հաջողություններ է ունեցել:

ՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՄՈՊՐ-Ը

Հեղափոխության մարտիկներին ոգնելու Միջազգային կազմակերպությունը հիմնվեց Խորհրդային Միության մեջ 1922 թվի նոյեմբերին: «Հին բոլշևիկների ընկերությունը», այլ և «հին քաղաքական-տաժանակիրների

ընկերությունը» (այդ ընկերությունների մեջ մտնում են այն հին հեղափոխականները, վորոնք իրենց ամբողջ կյանքում կռվել են ցարիզմի դեմ. չնայելով իրենց ծերունի հասակին, նրանցից շատերը այժմ էլ իրենց բոլոր ուժերը նվիրել են Խորհրդային իշխանության շինարարությանը) բարձրացրին իրենց ձայնը սահմանից այն կողմն յեղող մեր յեղբայրների—հեղափոխական բանվորների ու գյուղացիների պաշտպանության համար: Այդ ընկերությունների անդամները իրենք անցել էին ցարական բանտի խիստ դպրոցը, ճաշակել էին ցարական տաժանակրության ու տանջանքների քաղցրությունը: Ուրեմն զարմանալի չե, վոր առաջին անդամ այս ընկերները իրենց վրա վերցրին կապիտալի բանտարկյալներին ոգնելու դարձը:

Անշուշտ բոլորն էլ հիշում են, թե ինչ դրության մեջ եր այդ ժամանակ մեր յերկիրը: Այն ժամանակ մենք դժվար էինք ապրում. հազիվ հաղ սկսել էինք վոտքի կանգնել քաղաքացիական կռվի ծանրությունից, Մերձվոլգյան շրջանում սոսկալի սով եր, գործարանները դեռ վատ էին աշխատում: Ու այնուամենայնիվ ռուս բանվորներն ու գյուղացիները հասկացան, վոր հեղափոխության մարտիկներին առանց ոգնության թողնել չի կարելի: Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները հասկացան, վոր հեղափոխության հաղթանակը Արևմուտքում, դա միևնույն ժամանակ մեր հաղթանակն է,—և միահամուռ կերպով արձագանք տվին Մոպրի կոչին: Մեր Միության բոլոր անկյուններից կոպեկներ ու շահիներ հասցնեն—կապիտալի բանտարկյալներին ոգնելու:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՄՈՊՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

Մոպրը մի կազմակերպություն է, ուր կամովին մտնում են բանվորներն ու գյուղացիները: Ո՞վ կարող է Մոպրի անդամ լինել: Ահա ինչ է ասում այդ մասին մեր կանոնադրությունը.

«ԽՍՀՄ-ում Մոպրի անդամ կարող էլինել ամեն մի աշխատավոր—և նրա ընտանիքի անդամները, ով զրկված չե ընտրելու և ընտրվելու իրավունքից, ընդունում է պրոլետարիատի դիկտատուրան, յենթարկվում է կանոնադրությանը, մտնում է վորևե «կազմակերպության» մեջ և մուծում է անդամավճար»:

Այդ նշանակում է, վոր Մոպրը իր դռները

ոիրով բացում է ամեն մի աղնիվ աշխատավորի առջև։ Աշխատավորների գիտակցությունը մթագնող տերտերները, կուլակները, չահաղետները (սպեկուլյանտ) ու սրանց նմանները —Խորհրդային իշխանությանը թշնամաբար վերաբերվող տարրերը մուտք չունեն Մոպրում։ Մոպրին հարկավոր չեն նրանք։

Մոպրի անդամները հաշվվում էին.

1924 թ. հունվարի 1-ին 500,000 (հինգ հարյուր հազար)

1925 » » 1 » 3,717,000 (յերեք միլիոն յոթ հարյուր 17 հազար

1926 » » 1 » 5,000,000 (հինգ միլիոն)

Յերեք տարում Մոպրի անդամների թիվը տասն անգամ աճել է։ Մոպր-ի հիմքը—բջիջն է։ Մոպրի անդամները ամեն մի գյուղում, ձեռնարկությունում, հիմնարկության մեջ, գործարանում, զորամասում—միանում են և կազմում ՄՈՊՐ-ի բջիջ։

Բջիջի խնդիրներն են հեղափոխության մարտիկներին նյութական և բարոյական ոգնություն ցույց տալ, արթնացնելով իր անդամների ակտիվությունն ու ինքնագործունեություններ», այսպես է ասում «ԽՍՀՄ-ի Մոպ-

րի բջիջների կանոնադրության» առաջին կետը։

Բջիջը անդամավճարներ է հավաքում, գրականություն է բերել տալիս, հեղափոխության մարտիկներին նվիրված յերեկոներ և կազմակերպում և այլն։ Ամեն մի բջիջ իր աշխատանքը այնպես է տանում, որ Մոպրի անդամը պարզ հասկանա կազմակերպության նպատակն ու խնդիրները և ամեն կերպ ոգնի նրա աշխատանքներին։

Խորհրդային Միության մեջ ՄՈՊՐ-ի բջիջներ հաշվվում են.

1924 թվի հունվարի 1-ին . . 29,500

1926 « » 1-ին . . 43,000

Տեսնում ենք, թե ինչպես անդադար աճում է Մոպրը, ինչպես շարունակ ավելի ու ավելի աշխատավորներ և գրավում իր շարքերը։

Ումնից է բաղկացած մեր կազմակերպությունը.

Մոպրի ամեն մի հարյուր անդամին ընկնում է.—բանվորներ . . . . . 39 հոգի

գյուղացիներ . . . . 22 »

ծառայողներ . . . . 29 »

այլք . . . . . 10 »

Ինչպես տեսնում ենք գյուղացիները դեռ

քիչ են։ Այստեղ աշխատանքի դեռ չչոշափված մի վայր է. բացի դրանից գյուղական պայմաններում աշխատելն էլ ավելի դժվար է քան քաղաքի։ Բայց այժմ Մոպրը մի շարք միջոցներ է ձեռք առնում գյուղում աշխատանքն ընդլայնելու, և գիտակից գյուղացիների—Մոպրի անդամների ոգնությամբ այդ դժվար խնդիրը կլուծվի։ Մոպրի անդամների ճնշող մեծամասնությունը անկուսակցականներ են. —100 անդամից 84-ը անկուսակցականներ են, 16-ը՝ կոմունիստներ և կոմյերիտականներ։

ՄՈՊՐԸ ԻՆՉՊԵՍ Է ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մոպրի բջիջները չրջանի սահմանում աշխատում են չրջանային Կոմիտեի ղեկավարությամբ. Գավառում—Մոպրի գավառային կոմիտեի ղեկավարությամբ։

Նահանգում՝ նահանգական կոմիտեի, իսկ ամբողջ Միության մեջ Մոպրի Համամիութենական Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ, վոր ընտրվում է Մոպրի Համամիութենական Համագումարում։ Այսպիսով ԽՍՀՄ-ում Մոպրը վերևից ներքև մի կազմակերպված, միասնական, կամավոր ընկերություն է։

ՄՈՊՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մեր ոգնությունը.—Թվերը ցույց են տալիս, վոր Խորհրդային յերկրի աշխատավորները, բանվորներն ու գյուղացիները, ահագին ոգնություն են ցույց տվել հեղափոխության բանտարկված մարտիկներին։ Խորհրդային Միության աշխատավոր մասսայի մեր բանտարկված յեղբայրներին ոգնելու պատրաստակամությունը այժմ էլ չի թուլացել, այլ ընդհակառակը—սպիտակ տերորի ամեն մի նոր փաստ, բուրժուազիայի ամեն մի նոր բռնություն—բանվոր դասակարգի վերաբերմամբ, ավելի յե ուժեղացնում մեր կազմակերպության ամեն մի անդամի պատրաստակամությունը՝ հետագա ոգնության համար.

1923 թվին տացվել է	.	.	282,000 ռ.
1924 »	»	.	2,150,000 »
1925 »	»	.	2,955,000 »

Ինչպես տեսնում ենք տասն անգամ շատացել են մուծումները։ Այս գումարները կազմված են անդամավճարներից և կամավոր նվիրատվություններից։ Անհրաժեշտ է նույնպես նշել, վոր հաճախ, գյուղացիք իրենց տեսական ձեռներեցությամբ, իրենց դաշտերում

Մոպրի ոգտին արտեր են ցանում, անասուններ, հաց և այլ բաներ են նվիրում։

ՄՈՊՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.

Մոպրի աշխատանքը միայն այն չէ, վոր ամեն մի անդամից ամսական հինգ կոպեկ հավաքի։ Դա քիչ է։

Չէ՛ վոր պետք է բացատրել, թե ուր և ում համար են գնում այդ փողերը, մենք ինչո՛ւ պետք է ոգնենք հեղափոխության մարտիկներին, Մոպրը ինչ դեր է խաղում համաշխարհային հեղափոխական շարժման մեջ, ինչու պետք է մենք ամրապնդենք Մոպրը և աջակցենք նրան։ Մի խոսքով, մեր շարքերը մտնող ամեն մի բանվորի, ամեն մի գյուղացու, պետք է կազմակերպության գիտակից անդամ դարձնենք։ Այդ նպատակով ԽՍՀՄ-ում Մոպրը հրատարակում է գրականություն—հանդեսներ, գրքույկներ, պլակատներ. բջիջներն ակումբներում և խրճիթ-ընթերցարաններում Մոպրի ակյուններ են սարքում. խմբակներ ու դասընթացներ են կազմակերպում, ուր մեր կազմակերպության համար ակտիվ աշխատակիցներ են պատրաստվում. ժողովներ ու զրույցներ են կազմակերպում, ուր լուսաբան-

վում են Մոպրի աշխատանքները, կապիտալիստական յերկրների դրությունը և այլն։

Եկի մի քանի թվեր բերենք, վորոնք ցույց են տալիս, թե ինչ է արել Մոպրը իր անդամների դաստիարակության համար։

Զանազան տեսակի գրականություն է հրատարակված.

1923 թվին	1924 թվին	1925 թվին
271,700 որինակ	2,940,000	7,948,000

Այսպիսով 1923 թվի հետ համեմատած գրականությունը չատացել է 30 անդամ։

Մոպրի խմբակները (այդ խմբակներում ուսումնասիրվում է հեղափոխական շարժումը, Մոպրի աշխատանքը և այլն)։

Միության մեջ հաշվվում եր.

1925 թվի մայիսի 1-ին—664 խմբակ
1926 » » 1 » —1449 »

Այստեղ ել տեսնում ենք, վոր 2 անդամից ավելի յե աճել։

ՄՈՊՐ-ի անդամների դաստիարակության համար մեծ նշանակություն ունի ՄՈՊՐ-ի կազմակերպության չեֆությունը կապիտալիստական բանտերում յեղող յեղբայրական մարտիկների վերա։ Այսպես որինակ Մոսկվան չեֆ է Քիշնևի (Բեսարաբիա), Լոդզի, Վաբ-

չավայի (Լեհաստան) և այլ բանտերի. Վլադիմիրով նահանգը՝ Գոնեվեժե-ի (Լիտվա) բանտի, Կիյեվը՝ Լ'վովի (Գալիցիա) բանտի և այլն: Շեֆերն իրենց չեֆարկյալ բանտարկված ընկերներին նամակներ, նվերներ են ուղարկում, ընդհանուր ժողովներում պատմում են այն մասին, թե ինչ կարգեր են տիրում և բանտարկյալներն ինչպես են ապրում չեֆարկյալ բանտում: Այդ սիրա է տալիս բանտարկյալներին և նրանք զգում են, վոր իրանք մենակ չեն, վոր հարյուրավոր ու հազարավոր մոպրականներ հոգում են նրանց մասին:

1926 թվի մարտի 1-ին 86 չեֆ կար, վորոնցից չեֆարկյալ բանտերի թիվն եր 192:

ԱՌԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՊՐ-Ի ԱՆԴԱՄ ՉԿԱ.

ՄՈՊՐ-ի դաստիարակչական աշխատանքը կարող է հաջող լինել միայն այն ժամանակ, յերբ ՄՈՊՐ-ի ամեն մի անդամ վերևից, կենտրոնից ցուցմունքի չի սպասել, այլ ինքը կհետաքրքրվի աշխատանքով, ինքը անհրաժեշտ նախաձեռնություն կվերցնի իր վրա: Ու ՄՈՊՐ-ի աշխատանքը ԽՍՀՄ-ում կառուցվում է վոչ թե մեծ ապարատի շնորհիվ, այլ նրա անդամների նախաձեռնության ու ինքնուրույն-

ության: Սա յե ՄՈՊՐ-ի հիմնական և մենակարևոր խնդիրը:

Ահա կարճ խոսքով այն, ինչ վոր արել է ՄՈՊՐ-ը այս կարճ ժամանակամիջոցում: Մեծ լուրջ աշխատանք է կատարված, բայց հաջիկայում ավելի մեծ աշխատանք կա կատարելու: Ամբողջ աշխարհի կապիտալիստները ու կալվածատերերը որն որի վրա ուժեղացնում են իրենց հարձակումը բանվոր դասակարգի ու գյուղացիության դեմ: Հարյուրավոր ու հազարավոր հեղափոխականներ ընկած են բուրժուազիայի գնդանները ու տանջարանները: ԽՍՀՄ-ում ՄՈՊՐ-ը պետք է անդնած լինի իր դիրքերում: ՄՈՊՐ-ը պատասխան պիտի լինի այն բանին, վոր ամեն բոպե չէ անի իր միլիոնավոր անդամներին՝ հզոր ողոք կազմակերպել սպիտակ տերրորի դեմ և կտիվ ոգնություն ցույց տալ հեղափոխության մարտիկներին:

Գիտակի՛ց գյուղացի՛, գրվի՛ր ՄՈՊՐ-ի անդամ, ոգնիր նրա աշխատանքին:

ՀՀ Ազգային գրադարան
NL0863978

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

1
2427